

ՃԳՆԱԺԱՄԻ ԱՐԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏՈՒԺԻ

ՄԻՋԱՋԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԶԲԱՂԿԱԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ



Վահե ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

1994 թ. ավարտել է ԵրժՇ-ն
(այժմ՝ ՀՊՏՀ): 1994-1997 թթ.
սովորել է ԵրժՇ ասպիրան-
տուրայում՝ «Տնտեսագիտու-
թյան փետություն» մասնագի-
տությամբ: 1998 թ. առաջար
գրավում է գիտամանկավար-
ժական գործունեությամբ գրն-
դեսագիտության փետության
ամբիոնում: Ակդրում՝ դրան ա-
սիստենսը, այնուհետև՝ դրան
դոցենտ: 2018 թ. մինչ օրս
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազորա-
կան կենտրոնի ավագ հետա-
զորող է: Հեղինակ է շուրջ 35
գիտական աշխարհանքների:

Հիմնաբառեր. միջազգային միգրացիա, աշխա-
րհանքային միգրանտներ, ճգնա-
ծամ, ոչ ֆորմալ զբաղվածություն,
աղքաղության մակարդակ

Հոդվածում անդրադարձ է կարարվում ներկա-
յիս համաշխարհային ճգնածամի ազդեցությանն աշ-
խարդարձի միջազգային միգրացիայի և ոչ ֆորմալ (ոչ
ծնական) զբաղվածության վրա: Վերլուծելով, մասնա-
վորապես, մինչգնածամային, ինչպես նաև 2020 թ.-ի
առաջին եռամյակի համար կանխարեւսվող հա-
մապատասխան ցուցանիշներն ըստ երկրների զար-
գացման համախմբի՝ հեղինակը կարարում է հե-
տպյալ եղանակացությունը. սրացված արդյունքները
բնորոշ են նաև Հայաստանի Հանրապետությանը,
քանի որ մինչգնածամային ժամանակահարվածի
ցուցանիշները հիմնականում համապատասխանում
են << համանման ցուցանիշներին:


Միջազգային միգրացիան շուկայական տըն-
տեսակարգին բնորոշ՝ օբյեկտիվ գործըն-
թաց է, որի տնտեսական ազդեցությունը զգալի է աշխա-
տաշուկայի կառուցվածքի վրա: Սակայն, միջազգային
միգրացիայի ներգործությունը մեծ է նաև սոցիալական,
ժողովրդագրական և հոգեբանական առումներով ինչ-
պես դոնոր, այնպես էլ ընդունող երկրների վրա: Միգրա-
ցիայի միջազգային կազմակերպության (IOM) 2020 թ.
գեկուցի համաձայն՝ 2019 թ.-ին աշխարհում գրանցվել է
272 միլիոն միգրանտ (գծապատկեր 1):

Համաձայն ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հար-
ցերի դեպարտամենտի (UN/DESA) տրամադրած ցուցա-
նիշների՝ 2017 թ. 258 միլիոն միգրանտից 164 միլիոնը
կամ մոտ 64%-ը աշխատանքային է¹ (գծապատկեր 2):

¹ 'Աղբյուրը' ILO Global Estimates on International Migrant Workers Results and Methodology Second edition (reference year 2017), https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---dcomm/---ubl/documents/publication/wcms_652001.pdf?fbclid=IwAR3sDsBG0dacuTeZkmBYoWPFWXA5kmLVAYoExSeSTV_661r0mWzIham4Tn0



Միջազգային միգրացիայի ծավալները 1995-2019 թթ.²



Աշխատանքային միգրանտներն (migrant workers) ըստ ընդունող երկրների եկամտի մակարդակի, 2017 թ.³


Միանգամայն հասկանալի է, որ աշխատանքային ռեսուրսները, շուկայի օրենքներին համապատասխան, այսպես կոչված, մշտական «փնտրտութի» մեջ են՝ փորձելով գտնել իրենց ունակությունների կիրառման առավել արդյունավետ վայրեր և ոլորտներ, ապահովել բարձր արտադրողականություն։ Այս տեսանկյունից, պատհական չէ, որ նրանց մեծ մասը (մոտ 68%) իր «հանգրվանը», ի վերջո, գտնում է եկամբարտի բարձր մակարդակ ունեցող կամ, պարզապես, զարգացած երկրներում։

Վերջին ժամանակաշրջանում, պայմանավորված աշխատանքային միգրանտնե-


րի կողմից դրամական փոխանցումների (մասնավոր տրասֆերտների) էական աճով, այս հիմնախնդրի վերաբերյալ մեծացել է հետաքրքրությունը (գծապատկեր 3, 4): Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, աշխատանքային միգրանտներ ընդունողների և դրամական փոխանցումներ իրականացնողների առաջին տասնյակում հիմնականում բարձր եկամուտ (high-income) ունեցող երկրներն են (բացառությամբ Ռուսաստանի և Չինաստանի), մինչդեռ աշխատանքային միգրանտներ «ապահովող» դոնորների և դրամական փոխանցումներ (մասնավոր տրանսֆերտներ) ստացողնե-

² Աղյուրը՝ WORLD MIGRATION REPORT 2020, International Organization for Migration (IOM), https://publications.iom.int/system/files/pdf/wmr_2020.pdf

³ Գծապատկերը կազմել է հեղինակը: Աղյուրը՝ WORLD MIGRATION REPORT 2020, International Organization for Migration (IOM), https://publications.iom.int/system/files/pdf/wmr_2020.pdf



ԴժԱՊԱՏԿԵՐ 3
**Դրամական փոխանցումներ (մասնավոր տրանսֆերտներ) հրականացնող
երկրների առաջին տասնյակը (մլրդ ԱՄՆ դոլար)⁴**



ԴժԱՊԱՏԿԵՐ 4
**Դրամական փոխանցումներ (մասնավոր տրանսֆերտներ) ստացող երկրների
առաջին տասնյակը (մլրդ ԱՄՆ դոլար)⁵**

որի առաջին տասնյակում (գծապատկեր 4)՝ հիմնականում միջինից ցածր եկամուտ ունեցող երկրները (բացառությամբ Գերմանիայի և Ֆրանսիայի՝ high-income, Մեքսիկայի և Չինաստանի՝ upper-middle income):

Միաժամանակ, այեսք է նշել, որ, ըստ տարբեր հաշվարկների, **SCEC** (OECD) երկրներում աշխատանքային միզրանտների մոտ 30%-ը ոչ ֆորմալ զբաղվածներն

են⁶: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ) առաջարկում է ոչ ֆորմալ վարձու աշխատողների մեջ հաշվի առնել բոլոր նրանց, որոնց գործառուն չի տվել սոցիալական երաշխիքներից (սոցվճար, վճարովի արձակուրդ, անաշխատունակության նպաստ և այլն) թեկուզ և մեկը՝ անկախ աշխատանքային պայմանագրի բնույթից (գրավոր պայմանագիր, բանավոր համաձայնություն):⁷ Համաշխարհա-

⁴ Աղյուրը՝ WORLD MIGRATION REPORT 2020, International Organization for Migration (IOM), https://publications.iom.int/system/files/pdf/wmr_2020.pdf, 2018 թ. տվյալները բացակայում են:


⁵ Աղյուրը՝ WORLD MIGRATION REPORT 2020, International Organization for Migration (IOM), https://publications.iom.int/system/files/pdf/wmr_2020.pdf

⁶ Աղյուրը՝ Mariano Bosh, Lídia Farre, Immigration and the Informal Labor Market. Bonn 2013, <http://ftp.iza.org/dp7843.pdf>

⁷ «Հիմնակազմական կումիտե, Ձեռնույց՝ աշխատուժը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում (ըստ բանքային միանվագ հետազոտության արդյունքների վերաբերյալ)», 2008 թ., https://www.armstat.am/file/article/rep_ashx_09a_4.pdf


յին տնտեսության ճգնաժամի փուլում, որը պայմանավորված է COVID-19-ի պատճառած վնասներով, ոչ ֆորմալ զբաղվածների սոցիալական վիճակը վատթարանում է ավելի արագ տեսներով: Ներկայիս ճգնաժամն անախաղեակ ազդեցություն ունեցավ երկրների տնտեսական գործունեության և աշխատաժամանակի տևողության վրա: 2020 թ.-ի առաջին եռամյակում աշխատանքների արգելափակման (lock-down) հետևանքով ամբողջ աշխարհում

կրճատվեց աշխատաժամանակի մոտ 4,5%-ը, որը հավասար է մոտ 130 միլիոն աշխատատեղի (լրիվ աշխատաժամանակով)⁸: Այս ազդեցությունը հիմնականում թիրախավորեց միջինից ցածր եկամուտ ունեցող երկրների 80% (այս խմբում է նաև Հայաստանի Հանրապետությունը) և ցածր եկամուտ ունեցող երկրների 68% ոչ ֆորմալ զբաղվածներին (գծապատկեր 5)⁹: Եվ դա այն պարագայում, եթե աշխարհում այդ ցուցանիշը 47% է:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Ճգնաժամի ազդեցությունը ոչ ֆորմալ զբաղվածության վրա¹⁰



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

Ճգնաժամի հնարավոր ազդեցությունը ոչ ֆորմալ աշխատողների եկամտի վրա¹¹

⁸ Աղյուր՝ ILO Monitor: COVID-19 and the world of work. Third edition Updated estimates and analysis 29 April 2020, https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---dcomm/documents/briefingnote/wcms_743146.pdf

⁹ Վերլուծությունը կատարվել է ըստ 129 երկրի տնային տնտեսությունների (ընդհանուր զբաղվածության 90%-ը) հարցման արդյունքների:

¹⁰ Աղյուր՝ ILO Monitor: COVID-19 and the world of work. Third edition Updated estimates and analysis 29 April 2020, https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---dcomm/documents/briefingnote/wcms_743146.pdf

¹¹ Գծապատկերը կազմել է հեղինակը: Աղյուր՝ ILO Monitor: COVID-19 and the world of work. Third edition Updated estimates and analysis 29 April 2020, https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---dcomm/documents/briefingnote/wcms_743146.pdf


Գծապատկեր 6-ում ներկայացված է COVID-19-ի կործանարար ազդեցությունը տնտեսությունում ոչ ֆորմալ գրաղվածների վրա (ըստ երկրների իմբերի): Մասնավորապես՝ ամբողջ աշխարհում ոչ ֆորմալ գրաղվածների եկամուտները նվազել են 60%-ով, ըստ որում, բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ 76%-ով, միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ 28%-ով, ցածր և միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներում՝ 82%-ով (այդ թվում՝ <<-ում):

Գծապատկեր 7-ում ներկայացված է COVID-19-ի ազդեցությունը ոչ ֆորմալ գրաղվածների աղքատության մակարդակի վրա (2020 թ. առաջին եռամյակ):¹² Ակնհայտ է, որ ճգնաժամի հիմնական «տուժողները» բարձր, ինչպես նաև ցածր և միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներն են, համապատասխանաբար՝ 65% և 76%:

Եղրակացություն:Հոդվածում կատարված վերլուծության և կանխատեսման արդյունքները կարող են վերաբերել նաև Հայաստանին, քանի որ մինչճգնաժամային ժամանակահատվածի համար բերված ցուցանիշները հիմնականում համապա-

տասխանում են << նմանատիպ ցուցանիշներին: Մասնավորապես.

- Համաձայն << վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2018 թ.-ին միգրացիոն գործնթացներում (ներքին և արտաքին) ներգրավված է եղել շուրջ 137,7 հազ. մարդ՝¹³, որից 80.6%-ը՝ միջայտական միգրանտ՝ 110,442 մարդ, ինչու տվյալ տարվա << մշտական բնակչության մոտ 3.7%-ն է:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ << վիճակագրական կոմիտեն չի հրապարակում ընդհանուր միգրանտների մեջ աշխատանքային միգրանտների քանակը, իմք ենք ընդունել առաջնային հարցումների հիման վրա ստացված տվյալները՝ 76,8%¹⁴:
- Եթե ընդունենք, որ բոլոր ինքնազբաղվածներն աշխատում են ոչ ֆորմալ դաշտում և հաշվի առնենք վարձու աշխատողների ոչ ֆորմալ գրաղվածության մակարդակը, ապա Հայաստանում ոչ ֆորմալ գրաղվածության մակարդակը մոտ 46 տոկոս է¹⁵:
- 2018 թ. աշխատանքային միգրանտնե-



Ճգնաժամի հավանական ազդեցությունը ոչ ֆորմալ աշխատողների աղքատության մակարդակի վրա (%)¹⁶

¹² Վերլուծությունը հիմնված է 64 երկրի՝ 2016-2019 թթ. ժամանակահատվածում հավաքագրված կշռված միջին տվյալների վրա:

¹³ << վիճակագրական կոմիտե, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2019 թ., https://www.armstat.am/file/article/demog_2019_7.pdf

¹⁴ Զ. Թաղլուսյան, Կ. Հակոբյան, Դ. Գալյան, Լ. Աղաջանյան, Արտաքին աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ, Եր., 2014, էջ 68

¹⁵ Մ. Օնորատի, Ս. Յե Սիլվա, Ն. Սիլվա, Ֆ. Քերշառամներ, Աշխատանք Հայաստանում ավելի լավ ապագայի համար, Աշխատատեղերի դիմամիկայի վերլուծություն. Համաշխարհային բանկ, 2019 թ., հոկտեմբեր, էջ 28, <http://documents.worldbank.org/curated/en/325281572596343195/pdf/Work-for-a-Better-Future-in-Armenia-An-Analysis-of-Jobs-Dynamics.pdf>

¹⁶ Գծապատկերը կազմել է հեղինակը: Աղյուրը՝ ILO Monitor: COVID-19 and the world of work. Third edition Updated estimates and analysis 29 April 2020, https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---dcomm/documents/briefingnote/wcms_743146.pdf

րի մոտ 92%-ը, որպես նպատակային, ընտրել է միջինից բարձր (Ռուսաստան՝ 89,9%) և բարձր (2%) եկամուտ ունեցող երկրները¹⁷:

Վերջին տարիներին << արտագաղթի ցուցանիշներում, ի տարբերություն 1990-ական թվականներին տեղի ունեցած մըշտական արտագաղթի, գերակշռում է աշխատանքային միգրացիան, որն արդեն իսկ դրական երևոյթ է: Ուստի անհրաժեշտ է, որ ներկայում կառավարությունը հստակ ծրագրեր իրականացնի տնտե-

սության իրական հատվածում պետական կապիտալ ծախսերի ավելացման ուղղությամբ: Կարճաժամկետում այդպիսի քաղաքականությունը հնարավորություն կտա որոշ չափով փոխատուցելու ներկային ճգնաժամային պայմաններում արտերկրություն ստացվող մասնավոր տրանսֆերտերի ծավալների կրճատումը: Միաժամանակ, նման մոտեցումը կնպաստի միջին որակավորմամբ աշխատութիւն միգրացիայի էական կրճատմանը երկարաժամկետում:

¹⁷ << Վիճակագրական կոմիտե, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2019 թ., https://www.armstat.am/file/article/demog_2019_7.pdf

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թաղևոսյան Զ., Հակոբյան Կ., Գալյոյան Դ., Աղաջանյան Լ., Արտաքին աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ, Եր., 2014:
2. Օնորատի Մ., Դե Սիլվա Ս.Յ., Միլան Ն., Քերչբառումներ Ֆ., Աշխատանք Հայաստանում ավելի լավ ապագայի համար, Աշխատատեղերի դինամիկայի վերլուծություն. Համաշխարհային բանկ, 2019 թ., հոկտեմբեր:
3. << Վիճակագրական կոմիտե, Զեկույց աշխատությ և ոչ ֆորմալ գրադածությունը Հայաստանում (ընտրանքային միանվագ հետազոտության արդյունքների վերաբերյալ), 2008:
4. << Վիճակագրական կոմիտե, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2019:
5. World Migration Report 2020, International Organization for Migration (IOM).
6. ILO Global Estimates on International Migrant Workers Results and Methodology Second edition (reference year 2017).
7. Mariano Bosh, Lídia Farre, Immigration and the Informal Labor Market. Bonn 2013.
8. ILO Monitor: COVID-19 and the world of work. Third edition Updated estimates and analysis 29 April 2020.
9. Stephen Castles, Raúl Delgado. Wise Migration Development: and Perspectives from the South, 2008 International Organization for Migration (IOM).

Վահ ԲՈՂԱՆԻԿՅԱՆ

Старший исследователь исследовательского центра "Амберд", АГЭУ,
кандидат экономических наук, доцент

ԱՐՄԵՆԻԱ Ի ՄԻՌ

ВЛИЯНИЕ КРИЗИСА НА МЕЖДУНАРОДНУЮ ТРУДОВУЮ МИГРАЦИЮ И НЕФОРМАЛЬНУЮ ЗАНЯТОСТЬ

В статье рассматривается влияние нынешнего глобального кризиса на международную трудовую миграцию и неформальную занятость. В частности, были проанализированы соответствующие показатели до кризиса, а также за первый квартал 2020 года, в соответствии с уровнем развития стран.

В итоге, мы пришли к выводу, что результаты анализа и прогноза, сделанные в статье, являются типичными для Республики Армения, потому что показатели, приведенные до кризиса, в основном соответствуют аналогичным показателям Республики Армения.

Ключевые слова: международная миграция, трудовые мигранты, кризис, неформальная занятость, уровень бедности

Vahe BULANIKYAN

Senior Researcher at "Amberd" Research Center, ASUE,
PhD in Economics

ARMENIA AND WORLD

IMPACT OF THE CRISIS ON INTERNATIONAL LABOR MIGRATION AND INFORMAL EMPLOYMENT

The paper examines the impact of the current global crisis on the international labor migration and informal employment. In particular, the relevant indicators were analyzed before the crisis, as well as for the first quarter of 2020 in terms of the development of countries.

As a result, we came to the conclusion that the results of the analysis and forecast made in the paper are typical for the Republic of Armenia. Because the indicators carried out before the crisis basically correspond to the same indicators of the Republic of Armenia.

Key words: international migration, labor migrants, crisis, informal employment, poverty level